ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

10 հունիսի Շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

83
(2749)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ

Երեւանում աշնանը սպասվում են ավագանու ընտրություններ. մինչ հայաստանյան քաղաքական դաշտն ակտիվորեն պատրաստվում է ընտրությունների, իսկ իշխող քաղաքական ուժի թեկնածու Տիգրան Ավինյանն արդեն իսկ սկսել է քարոզարշավը, խորհրդարանական ընդդիմությունը լռում է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ խորհրդարանական ընդդիմությունը հիմնականում դեմ է ընտրություններին մասնակցելուն, բայց հայտարարում են, թե դեռ որոշում չունեն՝ մասնակցելու են ընտրություններին, թե ոչ:

Փոխարենը «Հայաստան» խմբակցությունից Անդրանիկ Թեւանյանը մեծ ցանկություն ունի առաջադրվելու՝ որպես ընդդիմության միասնական թեկնածու: Այս օրերին նա ակտիվորեն հանդիպում է արտախորհրդարանական ուժերի հետ, բանակցում խմբակցության իր թիմակիցների հետ, որպեսզի սատարեն իրեն:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով մեկնաբանություն է վերցրել նաեւ Թեւանյանից՝ հասկանալու՝ վերջնական ինչ որոշում ունի ընտրություններին մասնակցելու մասով. «Մենք նախաձեռնել ենք «Մայր Հայաստան» շարժումը, բայց շարժման օրակարգում Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցելու հարց չենք քննարկել. երբ ժամանակը գա, կորոշենք՝ մասնակցում ենք, թե ոչ: Մասնակցությունը բացառապես քաղաքական կարող է լինել: Կարծում եմ՝ այս պահին վաղաժամ է խոսել ընտրություններին մասնակցելու մասին, քանի որ երկրի առջեւ բազմաթիվ անվտանգային խնդիրներ կան ծառացած»,- ասաց նա:

Պատգամավորից հետաքրքրվեցինք՝ այս օրերին հանդիպումներ ունենում է արդյոք քաղաքական ուժերի հետ, թիմակիցների հետ քննարկել է արդյոք ավագանու ընտրություններին մասնակցելու հարցը. «Մենք հանդիպում ենք բացառապես «Մայր Հայաստան» շարժման շրջանակներում՝ մեր հռչակած նպատակների շուրջ գործողությունների գնալու, համախմբելու եւ կազմակերպչական հարցեր քննարկելու համար: Ընտրություններին մասնակցելու հարց դեռ չենք քննարկել. հազար ու մի անվտանգային հարց կա»,-ասաց նա:

ՀՅԴ Հայաստանի կազմակերպության 26-րդ գերագույն ժողովը երեկվանից մեկնարկել է իր աշխատանքները: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՅԴ ժողովի օրակարգում 2 տասնյակից ավելի հարցեր են ընգրկված՝ կուսակցության գործունեության, ռազմավարության հետ կապված մի շարք հարցեր, ինչպես նաեւ կքննարկվեն Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների առջեւ ծառացած մարտահրավերները: Ժողովի ընթացքում ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի նոր կազմ կընտրվի, իսկ արդեն ժողովից հետո ՀՅԴ ԳՄ-ն քվեարկությամբ նոր ներկայացուցիչ կընտրի: ՀՅԴ Գերագույն ժողովը կտեւի մի քանի օր, մինչեւ օրակարգն ամբողջությամբ սպառվի:

Կառավարությանը ենթակա բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը փորձ է անում ցույց տալ, թե աշխատում է. սոցիալական ցանցի պաշտոնական էջում հաղորդագրություններ է տարածում, սակայն իրականում այս մարմնում գործառույթներն ամբողջովին չեն կատարվում: Տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը 2021թ. ապրիլի 22-ին է ՀՀ վարչապետի որոշմամբ նշանակվել ՀՀ կառավարությանը ենթակա բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավար: Տեսչական մարմնի գործառույթների մեջ նշված է. «Տեսչական մարմինն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով, իրականացնում է վերահսկողական եւ (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, այդ թվում՝ կիրառում է պատասխանատվության միջոցներ բնապահպանության եւ ընդերքի ոլորտներում»: Սակայն պաշտոնական հաղորդագրության մեջ որեւէ հանքավայրի ստուգման մասին տեղեկություն այդպես էլ չենք հանդիպել: Իրականում պատճառն այն է, որ տեսչական մարմնում անգամ համապատասխան մասնագետներ չկան ծանր հանքարդյունաբերության ստուգումների համար: Նշենք, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանն է համակարգում տեսչական մարմինների գործառույթը, զբաղվում կադրային հարցերով: Նկատենք՝ Նիկոլ Փաշինյանը երկու տարի առաջ նշում էր. «Ուզենք, թե չուզենք, հանքարդյունաբերությունը շատ էական դեր է խաղում Հայաստանի տնտեսության համար, այդ թվում՝ անվտանգային համատեքստում»: Եւ այս պայմաններում այս ոլորտը ստուգող մասնագետներ, չկան պետական տեսչական մարմնում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Դավիթաշեն վարչական շրջանի ղեկավար Ռոման Համբարձումյանի օգնական Կորյուն Մխիթարյանի վրա կրակելու դեպքը բավականին խոր արմատներ ունի. միայն այն վարկածը չէ, որ քննում են իրավապահները: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Դավիթաշենի թաղապետի օգնական Կորյուն Մխիթարյանն իր շրջապատի մի քանի մարդկանց հետ կռիվ է արել: Մասնավորապես՝ թաղապետի օգնականը ծեծի է ենթարկել Կոտայքի մարզի մի բնակչի՝ Ս. Ս.-ին՝ կոտրելով նրա ոտքերը: Ու թեեւ իրավապահները քննում են վարկած, թե թաղապետի օգնականը հողակտորում շինարարության համար է կռվի մեջ ընկել, որ կրակել են նրա վրա, այնուամենայնիվ, պարզվում է՝ դրանից առաջ էլ կա նախապատմություն. «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ռոման Համբարձումյանի օգնականի վրա ուղղված մայիսի 19-ի կրակոցների գործով իրավապահները իրական կրակողին մինչ օրս չեն գտել եւ որոշել են կալանավորել Կոտայքի բնակիչ Ս. Ս.-ին, որպեսզի իրական կրակողը գա, ներկայանա: Կասկածներ ունեն, որ ոտքերը կոտրած քաղաքացու մտերիմներն են հաշվեհարդար տեսել թաղապետի օգնականի նկատմամբ: Տեղեկացանք, որ երեկ երկու անձի դարձյալ ձերբակալել են սպանության փորձին իբրեւ օժանդակելու համար, որոնցից մեկը նույնիսկ Երեւանում չի եղել դեպքի օրը: Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ իրավապահների մոտ տվյալներ կան՝ միջադեպի օրը Դավիթաշենի թաղապետ Ռոման Համբարձումյանի օգնական Կորյուն Մխիթարյանն է առաջինը մեքենայից կրակոցներ արձակել, երբ փայտերով հարձակվել են իր մեքենայի վրա: Ինչ զենքով է կրակել՝ մեզ դեռ չհաջողվեց պարզել: Հիշեցնենք, որ այս տարվա մայիսի 19-ին մի խումբ անձինք, դարանակալելով «Վոլսկվագեն տուարեգ» մակնիշի ավտոմեքենային, որի ղեկին եղել է թաղապետի օգնական Կորյուն Մխիթարյանը, մահակներով վնասել են հիշյալ ավտոմեքենան, իսկ 30-ամյա տղամարդն իր մոտ գտնվող հրազենով կրակել է ավտոմեքենայի ուղղությամբ, որի հետեւանքով թաղապետի օգնականի թիկունքային հատվածում պատճառվել է մարմնական վնասվածք: Ըստ ՀՀ քննչական կոմիտեի հայտնած տեղեկության՝ դեպքին մոտ 2-3 ամիս առաջ նախորդել է հողակտորի հարցի շուրջ 41-ամյա տղամարդու եւ մի 30-ամյա տղամարդու միջեւ սուր վիճաբանություն: Ըստ ArmLur.am-ին հասած տեղեկությունների՝ քաղաքացին հողակտոր է ունեցել, որի վրա շինարարություն է կատարել, եւ թաղապետ Ռոման Համբարձումյանի օգնական Մխիթարյանը (չի բացառվում՝ հենց Ռոման Համբարձումյանի հանձնարարությամբ) անընդհատ միջամտել է, խոչընդոտել քաղաքացուն: Թաղապետի տեղակալ Հրաչյա Հակոբյանը մեզ հետ զրույցում պնդում է, որ թաղապետի օգնականը հողակտորի զավթման հետ որեւէ առնչություն չունի եւ չի ունեցել, եւ իրենց համար կատարվածը առեղծված է:



ԲԱՑԱՌԻԿ

ԿԱՐԻՆ ՏՈՆՈՅԱՆԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հասարակական գործիչ Կարին Տոնոյանը չի բացառել, որ հնարավոր է վերադառնա քաղաքականություն:

-Տիկին Տոնոյան, Դուք շարժում էիք ձեւավորել եւ պայքարում էիք այս իշխանությունների հեռացման համար: Ի՞նչ կատարվեց, ի՞նչը Ձեզ հետ պահեց:

-Իրականում ես հետ եմ կանգնել ոչ թե պայքարից, այլ քաղաքական դաշտում պայքարից, որովհետեւ ես տեսա, որ քաղաքական դաշտում չկա ազնիվ պայքար, եւ մինչեւ վերջ որեւէ մեկին չես կարող վստահել: Շատ անհասկանալի հարցեր կան, եւ ամենակարեւորը՝ շատ անբարո մթնոլորտ է, որովհետեւ բավական է մեկը մի փոքր սխալ թույլ տա, դա միանգամից օգտագործում են իրենց առավելություններն ընդգծելու համար: Եւ ընդհանրապես քաղաքականության մեջ իրական պայքար չկա. կա խմբային շահի համար պայքար, ոչ թե հայրենիքի կամ ժողովրդի: Համենայնդեպս, դա իմ մոտեցումն է, եւ ես հասկացա, որ եթե մինչ քաղաքականության մեջ հայտնվելը ես կարող էի վստահել որեւէ մեկին, որ երբեւէ ներկայիս քաղաքականությամբ կարելի է Հայաստանին հանել այս վիճակից, հիմա վստահ եմ, որ եթե այս իրավիճակը շարունակվի մեր քաղաքական դաշտում, եւ արմատապես չփոխվի մեր քաղաքական համակարգը, ավելի շատ կվնասի, քան կօգնի Հայաստանին: Հենց այս պատճառով ես հեռացա, որովհետեւ իրական պայքարի համար հասարակական դաշտը շատ ավելի լայն հնարավորություններ է ստեղծում, քան քաղաքականը:

-Իսկ գործող իշխանությունների հեռացումը դեռ մնո՞ւմ է Ձեր օրակարգում, թե՞ այլեւս բոլոր տարբերակները սպառված են, եւ անիմաստ է շարունակելը:

- Ոչ, չեմ կարծում, որ բոլոր տարբերակները սպառված են: Երկու տարբերակ կա՝ կա՛մ իրենց դրսից են հանում, կա՛մ մենք՝ ներսից: Ես հիմա, ուշադիր հետեւելով նրանց կատարած քայլերին, տեսնում եմ, որ իրենք փորձում են իրենց իսկ փոսը, որոնց մեջ ընկնելու են, ի վերջո, եւ եթե կողքից թվում է, որ իրենք Հայաստանի համար են ավելի շատ այդ փոսը փորում, ես կասեմ, որ՝ ոչ, եւ հետեւաբար, եթե անկեղծ, ես իրենց յուրաքանչյուր անցնող օրվա վրա տեսնում եմ իրենց ավարտի մոտ լինելը: Հենց այս պատճառով էլ ես կարծում եմ, որ չեն ավարտվել ու չեն սպառվել բոլոր տարբերակները. ընդհակառակը՝ այս իշխանությանը արդեն մեկ քայլ է մնացել, որ վերջնականապես ինքնասպանություն գործի: Իրենք իրենց բոլոր հայտարարություններով խախտում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, մեր հռչակագրի դերն են կորցնում, եւ այն պահին, որ իրենք դա կդարձնեն փաստ՝ ստորագրությամբ, այդ ժամանակ իրենց կորակեն որպես Սահմանադրություն խախտողի, հետեւաբար նաեւ հայրենիքի դեմ գործող վարչակարգի հենց Հայաստանի դատական համակարգով, չնայած որ բոլորիս էլ պարզ է, որ ներկայիս դատական համակարգը ենթարկվում է հենց իրենց: Այնուամենայնիվ, ցանկացած երեւույթ ունենում է իր վերջը, եւ ես համոզված եմ, որ իրենց վերջը շատ մոտ է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ՝ ԸՆՏԱՆՅՈՔ ՀԱՆԴԵՐՁ

Իշխանական վերնախավում կարծես դրոտոկոլ է դարձել աշխատանքային այցերի դեպքում ողջ ընտանիքով գործուղման մեկնելը:

Այս երեւույթը սոցիալական ցանցերում քաղաքացիների դժգոհությունն է առաջացրել: Ստացվում է՝ հարկատուներիս հաշվին իշխանական արտոնյալները ընտանյոք հանդերձ են գործուղման մեկնում:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վերջերս մեկնել էր Սոչի ԱՊՀ վեհաժողովին մասնակցելու նպատակով. վարչապետը Սոչի էր գնացել փոքր դստեր՝ Արփիի հետ:

Այս արատավոր սովորույթից հետ չի մնում նաեւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը: Վերջինս էլ մշտապես գործուղման մեկնում է տիկնոջ հետ:

Այսպիսով, հունիսի 6-9-ը ԱԺ պատվիրակությունը աշխատանքային այցով մեկնել էր Լոնդոն: Պատվիրակության կազմում էին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, ՔՊ խմբակցության պատգամավոր Սոնա Ղազարյանը, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը:

Համացանցում հրապարակված լուսանկարներից երեւում է, որ Սիմոնյանը աշխատանքային այցով Լոնդոն մեկնել է տիկնոջ եւ դստեր հետ, որը հանրության շրջանում մեծ զայրույթ է առաջացրել:

Քաղաքացիները նշում են, որ հայրենի պաշտոնյաները պաշտոնական այցերը դարձրել են իրենց ընտանեկան հանգիստը. գնում են նոր քաղաքներ, նոր երկրներ բացահայտելու համար: Սա իրականում խայտառակություն է, քանի որ պետական պաշտոնյաները Հայաստանի համար այս օրհասական օրերին կյանքն են վայելում տարբեր երկրներում իրենց ընտանիքի անդամների հետ, երբ նույն ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզի բնակիչները հայտնվել են հակառակորդի գնակոծությունների տակ, Արցախը 177 օր գտնվում է շրջափակման մեջ, ու Հայաստանի սահմանը ողջ երկայնքով վտանգավոր վիճակում է գտնվում:

Ք. Մ.

ԿՈՄԻՏԵՆ ՂԵԿԱՎԱՐ ՉՈՒՆԻ

ՀՀ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն չորս ավտոմեքենա է վերանորոգել: Այդ նպատակով կոմիտեն պայմանագիր է կնքել 494 հազար դրամի՝ մեկ անձից գնումների ընթացակարգով:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վերանորոգվել է երեք «Տոյոտա» եւ մեկ «Լիդան» մակնիշի ավտոմեքենա: Իսկ առհասարակ ինչո՞վ է զբաղվում այս կառույցը. կոմիտեն ղեկավար չունի, առաջին տեղակալը՝ Խաչատուր Խաչիկյանը, տեղակալը՝ Վահե Գրիգորյանը, ըստ պաշտոնական կայքի, աշխատում են կոմիտեում:

Ամենաթարմ տեղեկությունը պետական այս կառույցի գործունեության մասին այն է, որ Նիկոլ Փաշինյանն այս տարի՝ մարտին, այցելել է Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե՝ կառույցի 2022 թ. գործունեության հաշվետվությունը քննարկելու համար: Դրանից հետո կոմիտեում գլխավոր քարտուղարը պաշտոնանկ արվեց:

Հիմա էլ կոմիտեն որոշել է մեքենա նորոգել, բայց ղեկավար այդպես էլ չունեն:

ՔՊ–Ն ՆԻՍՏ ԿԱՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր»-ը երկուշաբթի օրը խմբակցության նիստ է անելու:

Արդեն գրել ենք, որ հաջորդ շաբաթ՝ երեքշաբթի օրվանից, մեկնարկում են ԱԺ հերթական նիստերը:

ԱԺ խորհուրդը երկուշաբթի կհաստատի նիստերի օրակարգը: Նիստերի մեկնարկին ընդառաջ՝ երկուշաբթի օրը, ՔՊ-ն խմբակցության նիստ կանի, որպեսզի քննարկի օրակարգի հետ կապված հարցեր, որոշեն՝ որ նախագծին ինչպես են քվեարկում, ինչ ելույթներ են ունենալու:

Հաջորդ շաբաթ Նիկոլ Փաշինյանը եւ նախարարները գալու են խորհրդարան, ուստի ԱԺ-ում թեժ է լինելու:

Ք.ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՍԵՆԱՏԻ ԿՈՉԸ՝ ԸՆԴԴԵՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ

ԱՄՆ հանրապետական սենատոր Ալեքս Պադիլլան եւ դեմոկրատական սենատոր Մարկո Ռուբիոն երկկուսակցական օրինագիծ են ներկայացրել, որով Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքն արգելափակելու կոնտեքստում Ջո Բայդենի վարչակազմին կոչ են անում պատժամիջոցներ կիրառել ադրբեջանցի պաշտոնյաների դեմ եւ դադարեցնել ցանկացած տեսակի ռազմական աջակցություն Ադրբեջանին. այս մասին հաղորդում է Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը:

Նշվում է, որ այս միջոցառումը նման է երկկուսակցական 108 բանաձեւին, որի նախաձեռնողներն են Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փալոնը եւ հայկական հանձնախմբի ղեկավարությունը, որն այժմ ունի 88 համահեղինակ:

Նոր ներկայացված բանաձեւը, որին աջակցում է Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Մենենդեսը, մասնավորապես կոչ է անում ԱՄՆ-ին պատժամիջոցներ կիրառել Արցախի շրջափակման եւ հակահայկական մարդու իրավունքների շարունակվող խախտումների համար պատասխանատու ադրբեջանցի պաշտոնյաների դեմ եւ կոչ է անում Ջո Բայդենի վարչակազմին դադարեցնել բոլոր ռազմական օգնությունն Ադրբեջանին՝ ամբողջությամբ կիրառելով «Ազատության աջակցության ակտի» 907-րդ լրացումը:

Ըստ Հայ դատի հանձնախմբի տրամադրած տեղեկության՝ Արցախի շրջափակման դեմ Պադիլլա-Ռուբիո միջոցառմանը կարելի է աջակցությունը հայտնել՝ այցելելով https://anca.org/resolution էջը:

«Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շրջափակումը, որը Լեռնային Ղարաբաղը (Արցախը) Հայաստանին կապող միակ ճանապարհն է, անմարդկային է եւ անընդունելի: Այս շրջափակումը հումանիտար ճգնաժամ է ստեղծել՝ Լեռնային Ղարաբաղի 120 000 հայերին զրկելով սննդից, դեղորայքից եւ առաջին անհրաժեշտության այլ պարագաներից: Մեր բանաձեւը պարզ կդարձնի, որ Միացյալ Նահանգները պետք է քայլեր ձեռնարկի Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու համար», - ասել է սենատոր Պադիլլան բանաձեւը ներկայացնելիս:

Կոնգրեսական Փալոնը ողջունել է Սենատում այդ բանաձեւի ներկայացումը՝ հայտարարելով. «Ես այսօր կանգնած եմ իմ գործընկերների կողքին՝ դատապարտելով Ադրբեջանի կողմից Արցախի շարունակվող շրջափակումը: Հասկանալի է, որ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակումը համակարգված է եւ նպատակ ունի փակել Արցախ պարենի, բժշկական պարագաների եւ փոխադրումների, ինչպես նաեւ այլ առաջին անհրաժեշտության ապրանքների մատակարարման միակ ճանապարհը: Մենք միասնական ենք՝ կոչ անելով Ադրբեջանին վերջ տալ այս միտումնավոր հումանիտար ճգնաժամին»:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԴՐԱՄԱՀԱՎԱՔՆԵՐ՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

Ուսումնական տարվա ավարտը հայտնի է ինչպես իր դրական ու հաճելի, այնպես էլ բացասական ու, ինչու ոչ, նաեւ վնասող կողմերով: Դպրոցներում՝ «Վերջին զանգ», մանկապարտեզներում «Ավարտական հանդես»-ներ: Առաջին հայացքից լուսավոր ու վառ հիշողություններ խոստացող այս միջոցառումները բազմիցս են աչքի ընկել ընթացքում տեղի ունեցող դրամահավաքությամբ:

Վերջին շրջանում ArmLur.am-ը պարբերաբար բողոքներ է ստանում ծնողներից: Վերջիններս ահազանգում են, որ պետական մանկապարտեզներում ավարտական հանդեսների համար տեղի է ունենում դրամահավաքություն, որը մեծ չափերի է հասնում:

Ծնողների խոսքով՝ իրենք չեն կարող գումարը չտալ, որովհետեւ այդ տարբերակի դեպքում խնդիրներ կառաջանան երեխաների համար, իսկ դա ցանկալի չէ որեւէ ծնողի համար:

Վերջերս մեծ աղմուկ հանեց նաեւ այն դեպքը, երբ ծնողներից մեկը անանուն կերպով հանրայնացրել էր, որ Ավանի 53 մանկապարտեզի տնօրենը ամեն երեխայից 45000 դրամ է հավաքում ավարտական խմբերի միջոցառման համար, ավելի կոնկրետ՝20000 դրամը՝շորեր կարելու եւ խմբային ավարտական նկարի՝ «վինետկայի», 25000-ը՝ «դաստիարակին վերաբերմունք ցույց տալու» համար:

ArmLur.am-ը կապ հաստատեց Երեւանի քաղաքապետարանի լրատվության վարչության հետ՝ ճշտելու, թե արդյոք իրենք տեղյակ են այս դեպքերից, ու եթե այո, զգուշացվել է արդյոք որեւէ մեկը, կամ այլ քայլեր ձեռնարկվել են արդյոք:

-Աղմուկ բարձրացրած այդ դեպքը որեւէ առնչություն չունի իրականության հետ: Մանկապարտեզի տնօրինությունը պատրաստ է բոլոր ծնողների ստորագրահավաքով ապացուցել, որ գումար հավաքելու որեւէ նախաձեռնություն մանկապարտեզի տնօրինության ու անձամբ տնօրենի կողմից չի եղել: Գրեթե հաստատված փաստ ունենք, որ դա եղել է ծնողներից մեկի նախաձեռնությունը: Որպեսզի այլ ծնողների հետ որեւէ խնդիր չառաջանա, ու ինքն էլ անանուն մնա, անարդարացիորեն վերագրել է մանկապարտեզի տնօրինությանը: Տնօրենը որեւէ նախաձեռնություն չի ունեցել տվյալ հարցում: Սովորաբար հենց այս սխեմայով էլ տեղի են ունենում նման դեպքերը:

Վարչությունից տեղեկացրին, որ Երեւանի քաղաքապետարանը ցանկացած պարագայում դրամահավաքությունը խստագույնս դատապարտում է, սակայն փորձը ցույց է տալիս, որ բողոքների մեծամասնությունը ոչ թե մանկապարտեզի տնօրինության նախաձեռնությամբ է տեղի ունենում, այլ հենց նույն ավարտական խմբերի ծնողների:

-Որպես կանոն, հենց խմբի ծնողներն են մեծամասամբ գաղափար տալիս շորեր գնելու կամ կարելու, «վինետկա» նկարվելու: Վերջում այդ խմբից որեւէ ծնող, որը համաձայն չի լինում այդ ամենին, դա որակում է որպես դրամահավաք տնօրինության կողմից:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՇԵՆՔԸ ՀԱՆՈՒՄ ԵՆ ԱՃՈՒՐԴԻ

Պետական գույքի կառավարման կոմիտեին ամրացված, պետական սեփականություն հանդիսացող, Երեւանի Ավան թաղամասի Խուդյակովի փողոց 1 գիտահետազոտական ինստիտուտ հասցեում գտնվող 1780.8 քառ. մետր մակերեսով անշարժ գույքը, ինչպես նաեւ դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0.1176 հեկտար մակերեսով հողամասը կօտարվի: Համապատասխան որոշումը կայացվել է կառավարության երեկվա նիստի ժամանակ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ գույքի գնահատված շուկայական արժեքը 2023 թվականի փետրվարի 23-ի դրությամբ կազմում է 322 մլն 500 հազար ՀՀ դրամ: Անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքում ներառված՝ հատկացված հողամասի գնահատված շուկայական արժեքը կազմում է 195 մլն 600 հազար դրամ: Մրցույթով օտարման ենթակա գույքի վաճառքի նվազագույն գին է սահմանվել գնահատված արժեքի 100 տոկոսի չափով՝322 մլն 500 հազար դրամ:

Մրցույթին մասնակցելու նախավճարը սահմանվել է գույքի վաճառքի նվազագույն գնի 5 տոկոսի չափով՝16 մլն 125 հազար դրամ, որը մրցույթի հաղթող ճանաչված մասնակցի համար համարվում է գույքի վաճառքի գնի մաս եւ գնորդի կողմից հետագա վճարումները կատարելուց հրաժարվելու դեպքում վերադարձման ենթակա չէ, փոխանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

ԿԱՐՈՒՍԵԼՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ

Կարուսելների (զվարճահարմարանքների) անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության կանոններ են սահմանվել: Որոշումը ընդունվել է երեկ՝ կառավարության նիստի ժամանակ:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարուսելները, (ատրակցիոնները) «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի համաձայն, արտադրական վտանգավոր օբյեկտ են համարվում, եւ տվյալ ոլորտի լիազորող մարմինը հանդիսանում է ԱԻՆ-ը, Էկոնոմիկայի նախարարության կողմից առաջարկություն է ներկայացվել ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Կարուսելների (զվարճահարմարանքների) անվտանգ շահագործման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1351-Ն որոշումը վերանայելու կամ այն ուժը կորցրած ճանաչելու մասով:

Նշվում է, որ ներկայումս Հայաստանում տեխնիկական անվտանգության նորմեր, կանոններ եւ հրահանգներ սահմանող իրավական ակտը բացակայում է, որի հիման վրա անհրաժեշտություն է առաջանում ընդունելու Կառավարության որոշում, որը կսահմանի տեխնիկական անվտանգության կանոններ:

Ն.Հ.

ՀԵՏԱՀԱՅԱՑ

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻ «ԲԵՍՊՐԵԴԵԼՆ» ՈՒ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Եթե իրավապահ համակարգը ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստում ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի հայտարարություններին իրավական գնահատական տար եւ պատժեր հրապարակային սպառնալիքների համար, այսօր չէինք ունենա այն, ինչ ունենք:

Արագածոտնի մարզպետի նախկին ՔՊ-ական տեղակալը կրիմինալի մեջ է, ՔՊ-ական պատգամավորը քաղաքացու կարտոֆիլն է ցաքուցրիվ անում, Դիլիջանի քրեականի պետը երեխա է ծեծում, իսկ երեկ էլ Արագածոտնի մարզի Արագածավանի Ջրային կոմիտեի պետ, ՔՊ-ական Սուրեն Թորոսյան է քաղաքացու ծեծել ու աչքերին գազ փչել: Իրավապահ համակարգն այս դեպքերից շատերի վրա աչք է փակում, ինչն էլ նոր հանցագործությունների սկիզբ է դառնում:

Փաստ 1

ՀՀ Արագածոտնի արդեն նախկին փոխմարզպետ Էդգար Փարվանյանին իրավապահների ձեռքից փրկելու համար իշխող թիմը որոշել է նրան ազատել պաշտոնից: Բանն այն է, որ իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի ընտանիքի մտերիմ փոխմարզպետը մարզում «բեսպրեդել» է հաստատել:

Փաստ 2

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի եւ Տիգրանյան փողոցում կարտոֆիլ վաճառող Արթուր Հակոբյանի միջեւ տեղի ունեցած միջադեպի գործը քննիչները մի կողմ են դրել եւ ավելի կարեւոր գործերով են զբաղված: Այսինքն՝ իշխանական պատգամավորի մասնակցությամբ տեղի ունեցած խուլիգանական արարքը չի քննվում:

Փաստ 3

Հունիսի 1-ին հրապարակեցինք աղմկահարույց տեսանյութ, թե ինչպես է Ներքին գործերի նախարարության ոստիկանության Տավուշի մարզային վարչության Դիլիջանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Արսեն Ղայթմազյանն անչափահաս տղային ծեծի ենթարկում, իսկ իրավապահ համակարգը գործը կարճել էր այն հիմքով, որ պետը զղջացել է, սակայն մեր հրապարակման արդյունքում Գլխավոր դատախազությունը որոշեց կալանավորել քրեականի պետին:

Փաստ 4

Իսկ, ահա, երեկ հերթը Արագածոտնի մարզի Արագածավանի Ջրային կոմիտեի պետ ՔՊ-ական Սուրեն Թորոսյանինն էր, որին ձերբակալելու որոշում է կայացվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ

Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ նախկին գլխավոր հարկադիր կատարող Մ. Պ.-ի թիկնապահ Է. Ս.-ն ու վարորդ Հ. Բ.-ն օժանդակել են Մ. Պ.-ի կողմից վատնման եղանակով պետական բյուջեի միջոցներից առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 44 մլն ՀՀ դրամ գումարի հափշտակություն կատարելուն:

Մասնավորապես՝ նախաքննությամբ պարզվել է, որ Մ.Պ.-ն իր անձնական թիկնապահ Է. Ս.-ին (2008 թվականի սեպտեմբերից մինչեւ 2016 թվականի ապրիլ) նշանակել է Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարման օպերատիվ բաժնի առաջին կարգի խորհրդատու, իսկ անձնական վարորդ Հ. Բ.-ին (2009 թվականի նոյեմբերի 3-ից մինչ– 2016 թվականի ապրիլ)՝ նույն բաժնի առաջատար խորհրդատու, սակայն նրանց հանձնարարել է, օրենքով սահմանված իրենց լիազորությունների իրականացման փոխարեն, ապահովել իր անձնական անվտանգությունը: Այսինքն՝ Է. Ս.-ն եւ Հ. Բ.-ն օպերատիվ բաժնում փաստացի աշխատանքի չեն հաճախել, այլ մշտապես ուղեկցել են նախկին գլխավոր հարկադիր կատարող Մ. Պ.-ին, կատարել նրա անձնական բնույթի հանձնարարությունները եւ, առանց համապատասխան պաշտոնից բխող գործառութային պարտականությունները կատարելու, ՀՀ պետական բյուջեից ստացել են աշխատավարձ ու դրան հավասարեցված վճարումներ:

Արդյունքում Մ. Պ.-ն, պաշտոնեական դիրքն օգտագործելով, վատնման եղանակով պետական բյուջեի միջոցներից Է. Ս.- ի դեպքում հափշտակել է ընդհանուր 22.117.820 ՀՀ դրամ, իսկ Հ. Բ.-ի դեպքում՝21.754.643 ՀՀ դրամ:

Վերը նշված հանցավոր արարքների կատարման համար Հ. Բ.-ին եւ Է. Ս.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկողություն իրականացնող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՄԱՆԱԽՆ ՈՒ ԴԱՏԱԽԱԶԸ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ ԵՆ

Արթուր Այվազյանին, որը հանրությանը հայտնի է Մանախ անունով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2021 թվականի հունիսի 9-ին բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որը զուգորդվել է անձանց նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով եւ բացառիկ ցինիզմով:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ դատարանն այս գործով կայացրել է որոշում եւ Արթուր Այվազյանին մինչեւ 01.07.2022թ. գործող ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով մեղսագրված արարքը վերաորակել եւ նրան մեղավոր ճանաչել 05.05.2021թ. ընդունված եւ 01.07.2022թ. ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով՝դատապարտելով տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի՝50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառմամբ՝ Մանախն այս որոշումը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ դատարան: Դատախազն էլ իր հերթին է բողոքարկել՝ պահանջելով դատապարտել նրան երկու տարվա ազատազրկման:

ԵՎՍ ԵՐԿՈՒՍԸ ՉԵՐԲԱԿԱԼՎԵՑԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ երեկ նախաքննական մարմինը Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի օգնական Կորյուն Մխիթարյանի վրա կրակոցի գործով եւս երկու անձի է ձերբակալել:

Հիշեցնենք, որ 2023 թվականի մայիսի 19-ին՝ժամը 09:00-ի սահմաններում, Բաշինջաղյան փողոց եւ Բաշինջաղյան փակուղի խաչմերուկում հիշյալ 30-ամյա տղամարդը, 36-ամյա տղամարդու եւ մի խումբ անձանց հետ դարանակալելով «Վոլսկվագեն տուարեգ» մակնիշի ավտոմեքենային, որի ղեկին եղել է թաղապետի օգնական Կորյուն Մխիթարյանը, իրենց մոտ գտնվող մահակներով վնասել են հիշյալ ավտոմեքենան, իսկ 30-ամյա տղամարդն իր մոտ գտնվող հրազենով կրակել է ավտոմեքենայի ուղղությամբ, որի հետեւանքով թաղապետի օգնականի թիկունքային հատվածում պատճառվել է մարմնական վնասվածք:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի հայտնած տեղեկության՝ դեպքին մոտ 2-3 ամիս առաջ նախորդել է հողակտորի հարցի շուրջ 41-ամյա տղամարդու եւ մի 30-ամյա տղամարդու միջեւ սուր վիճաբանություն: Թաղապետի տեղակալ Հրաչյա Հակոբյանը հայտնեց, որ թաղապետի օգնականը որեւէ հողակտորի զավթման պրոցեսի հետ կապ չի ունեցել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 8-ից 9-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 51 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀՐԱԺԱՐՎԵՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ

2023թ. հունիսի 1-ին գրությամբ Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին է դիմել «Դիլի» ՍՊԸ-ն՝ Դիլիջան համայնքի եւ այդ ընկերության միջեւ 2007թ. մարտի 23-ին կնքված 20,46 հեկտար, 2007թ. մարտի 23-ին կնքված 9,95 հեկտար, 2013թ. մարտի 5-ին կնքված 6,69095 հեկտար, 2013թ. մարտի 5-ին կնքված 4,41361 հեկտար եւ 2018թ. մայիսի 28-ին կնքված 5,4 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության պայմանագրերը լուծելու խնդրանքով: Հունիսի 6-ին Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշում է ընդունել Դիլիջան համայնքի եւ «Դիլի» ՍՊ-ի միջեւ կնքված, Դիլիջան համայնքի Արեւահովիտ հանդամասում գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության վերաբերյալ վերոհիշյալ 5 պայմանագրերը լուծելու մասին: «Դիլի» ՍՊԸ-ն հիմնադրվել է 1997 թվականին. այն Դիլիջանում զբաղվում է անասնապահությամբ եւ կաթնամթերքի մեծաքանակ արտադրությամբ:

ՍԵԼԱՎՆԵՐԸ՝ ՎՆԱՍՆԵՐԻ ՊԱՏՃԱՌ

Ժողովրդական խոսք կա՝ երաշտից սով չի լինի, եկից (երկար շարունակվող անձրեւներից) սով կլինի: Արդեն մեկուկես ամիս է, ինչ Տավուշի մարզում գրեթե ամեն օր անձրեւներ են տեղում: Սա խնդիրներ է ստեղծում նաեւ խոտհունձը ժամանակին կատարելու համար: Հունիսի 6-ի տեղատարափ անձրեւը Նոյեմբերյան համայնքի բնակավայրերում սելավների պատճառ է դարձել, փոքր գետերը վարարել, դուրս էին եկել հունից: Սովորաբար սակավաջուր Կողբագետը վարարել, հեղեղել էր կողբեցի գինեգործ Գագիկ Աղաբաբյանին պատկանող «Կանաչ այգի» ընկերության տարածքը: Վարարած գետակի ջուրը բարձրացել է ընկերության կողմից այգու տարածքում կառուցված կամրջի վրա, հոսել կամրջի վրայով: Վարարած գետն իր հետ բազմաթիվ կոճղեր, փայտակտորներ, պլաստմասե շշեր է բերել, որը հետո ընկերության աշխատողները հավաքել են: Բարեբախտաբար, վարարած գետ չի վնասել ընկերության խաղողի այգին: Սահմանամերձ Դովեղ գյուղում Նոյեմբերյան քաղաքի անտառներից սկիզբ առնող գետակը, դուրս գալով հունից, բավական տարածք քշել է, ջարդել է գյուղի բնակչուհիներից մեկին պատկանող մարդատար ավտոմեքենան: Նոյեմբերյանի համայնքապետարանից հայտնեցին, որ հունիսի 6-ի հորդ անձրեւները եւ դրանցից առաջացած սելավները մեծ վնասներ են պատճառել Նքոյեմբերյան, Կողբ, Դովեղ բնակավայրերի բնակիչների գույքին, ցանքատարածություններին, սելավը քշել -տարել է ընտանի կենդանիներ, վնասվել են առնվազն 4 մարդատար ավտոմեքենա:Հունիսի 12-ից սկսած՝ համայնքային հանձնաժողովը կհաշվարկի բնական տարերքի պատճառած վնասները, դրանք կներկայացնի Տավուշի մարզպետարան: Թե վնասների համար պետության կողմից որեւէ փոխհատուցում կամ աջակցություն կտրվի, հայտնի չէ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԽԱՂԵՐԻՆ

Լեհաստանի Կրակով քաղաքում հունիսի 21-ին կմեկնարկեն Եվրոպական ամառային երրորդ խաղերը, որին Հայաստանը կմասնակցի մեծամանակ ղատվիրակությամբ: Հայ մարզիկներն ուժերը կչափեն բռնցքամարտ, աթլետիկա, հրաձգություն, կարատե եւ մի շարք այլ մարզաձեւերում:

Եվրոպական ամառային երրորդ խաղերի ուղեգիրն առաջինը նվաճել է հրաձիգ Էլմիրա Կարապետյանը, ապա մասնակցության իրավունք են ձեռք բերել ստենդային հրաձգության ներկայացուցիչ Երջանիկ Ավետիսյանը եւ ատրճանակավար Բենիկ Խլղաթյանը:

Եվրոպական խաղերի բռնցքամարտի մրցաշարում Հայաստանի տղամարդկանց եւ կանանց հավաքականները հանդես կգան հետեւյալ կազմերով՝

տղամարդիկ՝ Ռուդոլֆ Գարբոյան (51 կգ), Արթուր Բազեյան (57 կգ), Նարեկ Հովհաննիսյան (63,5 կգ), Գուրգեն Մադոյան (71 կգ), Համբարձում Հակոբյան (80 կգ), Նարեկ Մանասյան (92 կգ) եւ Դավիթ Չալոյան (+92 կգ) :

Կանայք՝ Անուշ Գրիգորյան (50 կգ), Եկատերինա Սիչեւա (54 կգ), Տաթեւիկ Խաչատրյան (57 կգ), Էլիդա Քոչարյան (60 կգ), Սոնա Հարությունյան (66կգ) եւ Անի Հովսեփյան (75 կգ):

Տղամարդկանց հավաքականը հանդես կգա Կարեն Աղամալյանի, իսկ կանանց հավաքականը՝ Խաչիկ Խաչատրյանի գլխավորությամբ:

Հայաստանի աթլետիկայի կանանց եւ տղամարդկանց հավաքականներում ընդգրկվել են հետեւյալ մարզիկները՝

կանայք՝ վազորդներ Մարիաննա Բաղյան (100 մ.), Գայանե Չիլոյան (200մ., 400 մ.), Էլլադա Ալավերդյան (800մ. եւ 3000մ. խոչընդոտավազք), Ալիսոն Հալվերսոն (100մ – 400մ. արագավազք), Մարի Սարգսյան (1500մ., 5000մ.), ցատկորդ Յանա Սարգսյան (հեռացատկ, եռացատ), նետորդներ Ժաննա Շահնազարյան (մուրճ, սկավառակ), Ինգա Շեկոյան (4 ճ 100մ. փոխանցավազք):

Տղամարդիկ՝վազորդներ Գագիկ Աղամյան (100մ., 200մ.), Դավիթ Ղուկասյան (4 ճ 100մ փոխանցավազք), Դավիթ Սարգսյան (400մ.), Գոռ Հարությունյան (400մ. արագավազք), Երվանդ Մկրտչյան (1500մ.), Վանյա Սարգսյան (5000մ), Ռոման Ալեքսանյան (800մ.), Սոս Հարությունյան (3000մ. խոչընդոտավազք), ցատկորդներ Գոռ Բեգլարյան (հեռացատկ), Լեւոն Աղասյան (եռացատկ), նետորդներ Մանուկ Մանուկյան (սկավառակ, գունդ) եւ Վանիկ Առաքելյան (նիզակ): Եվրոպական խաղերի շրջանակում տեղի է ունենալու նաեւ աթլետիկայի Եվրոպայի թիմային առաջնությունը: Հայաստանի թիմն ընդգրկված է երրորդ խմբում:

Կրակովի տատամիի վրա իր ունակությունները կդրսեւորի թաեքվոնդիստ Սարգիս Սարգսյանը (74 կգ): Մրցումներին կմասնակցեն նաեւ կարատեի կումիտե մրցաձեւի ներկայացուցիչ, 68 կգ քաշային Անիտա Մակյանը, թեքբոլիստներ Քրիստինե Մանգասարյանը, Ռաֆայել Վարդանյան- Գոռ Սարգսյան երկյակը:

Հայկական պատվիրակության կազմում ընդգրկված կլինեն նաեւ ճկասուսերակիրներ Գրիգոր Պապոյանը, Բորիս Դադայանը, խոցասուսերակիրներ Ալիկ Նավասարդյանը, Գրիգոր Մնացականյանը, Էմմա Պողոսովան, ջրացատկորդներ Վլադիմիր Հարությունյանը, Արման Ենոքյանը, Մարատ Գրիգորյանը, Ալիսա Ջաքարյանը եւ մուայթայիստներ Նարեկ Խաչիկյանը, Գոռ Սարգսյանը, Արմեն Գրիգորյանը, Լուսի Տեր-Դավթյանը: Եվրոպական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձեւերից բացի, կլինեն նաեւ լրացուցիչ միջոցառումներ: Դրանցից մեկն արագ շախմատի Եվրոպայի առաջնությունն է: Մրցաշարին կմասնակցեն շախմատային ութ առաջատար երկրների ներկայացուցիչներ, որոնք 2023 թվականի մարտի 1-ի դրությամբ ունեցել են ՖԻԴԵ-ի լավագույն միջին վարկանիշ:

Յուրաքանչյուր թիմի երկյակում կլինեն մեկական տղամարդ եւ կին: Հայաստանը կներկայացնի Շանթ Սարգսյան - Էլինա Դանիելյան երկյակը: Առաջնությանը կմասնակցեն նաեւ Լեհաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի, Ֆրանսիայի, Ռումինիայի, Գերմանիայի եւ Նիդեռլանդների ներկայացուցիչները: Արագ շախմատի Եվրոպայի զույգերի առաջնությունը կմեկնարկի Կրակովի օպերային թատրոնում հունիսի 19-ին: Եվրոպական մայրցամաքի խոշոր մարզական իրադարձությունը կանցկացվի հունիսի 21-ից հուլիսի 2-ը: Խաղերի բացման արարողությունը տեղի կունենա Կրակովի Հենրիկ Ռեյմանի անվան մարզադաշտում: Խաղերի ընթացքում ավելի քան 7000 մարզիկ-մարզուհիներ 26 մարզաձեւերում կպայքարեն մեդալների 253 հավաքածուի համար: Եվրոպական ամառային երրորդ խաղերը կանցկացվեն Լեհաստանի 12 քաղաքներում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ՝ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Համահայկական ամառային 8-րդ խաղերը կմեկնարկեն 2023 թվականի օգոստոսին. բացման արարողությունը տեղի կունենա Գյումրիում:

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի ընդլայնված նիստի ժամանակ այս մասին ասաց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը:

«Այս պահին մասնակցության հազարավոր հայտեր ունենք եւ՛ արտերկրից, եւ՛ Հայաստանից: Կամավորական խմբերը նույնպես պատրաստ են. այս պահին շուրջ 900 կամավոր կա, որոնք կօգնեն խաղերը կազմակերպելու հարցում»,- ասաց Զաքարյանը:

Միջոցառմանը մասնակցում էր Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը, որը ողջունեց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի անդամներին՝ նշելով, որ Համահայկական խաղերը անկախ Հայաստանի հասարակական կյանքի կարեւոր բաղադրիչ են դարձել:

«Ավելի քան 20 տարի շարունակ սփյուռքի եւ Հայաստանի երիտասարդությանը Հայաստանում համախմբելուն զուգահեռ, այս մարզական իրադարձությունն էական նշանակություն է ստացել հասարակության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորման եւ սպորտի մասսայականության ապահովման հարցում:

Այս համատեքստում կարեւոր եմ համարում ընդգծել, որ տարեցտարի ընդլայնվում է Համահայկական խաղերի մասնակիցների թիվը: Եթե խաղերին մասնակցության քանակը սկզբնական շրջանում կազմում էր մոտ 1500, ապա այժմ այդ թիվը քառապատկվել է: Ավելի քան երկու անգամ ընդլայնվել է մարզաձեւերի քանակը՝դրսեւորվելու հնարավորություն ընձեռելով ավելի մեծ թվով տաղանդավոր մարզիկների»,- ընդգծեց Խաչատրյանը:

Փոխվարչապետն առանձնահատուկ կարեւորեց այն հանգամանքը, որ այս տարի Համահայկական խաղերը կանցկացվեն Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի եւ Արարատի մարզերում:

«Գաղտնիք չէ, որ մշակութային եւ սպորտային միջոցառումների մեծ մասը կենտրոնացված է մայրաքաղաք Երեւանում, ուստի Համահայկական խաղերի մարզային ընդգրկումը կարեւոր քայլ է մարզերում սպորտային առօրյան ակտիվացնելու եւ առողջ ապրելակերպի կարեւորությունը ընդգծելու հարցում: Համոզված եմ, որ Համահայկական խաղերի շարունակական անցկացումն իր կարեւոր ներդրումը կունենա սպորտի ժողովրդականացման եւ հայկական սփյուռքի տարբեր համայնքների երիտասարդությանը, եւ ոչ միայն երիտասարդությանը, հայրենիքում միավորելու գործում»,- եզրափակեց Խաչատրյանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 21-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ



2023թ. հունիսի 27-ին՝ ժամը 12:30-ին, Գառնիկ Կիրակոսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով Գառնիկ Կիրակոսյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1.ՀՀ ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Շերամի փողոց, 23 շենք, 3 բնակարան հասցեի անշարժ գույքը. 77.3 քմ մակերեսով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 17102019-01-0101 վկայական:

Մեկնարկային գինը սահմանվում է 20,703,600 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով (բայց ոչ ավել 200,000 ՀՀ դրամից) մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Գառնիկ Կիրակոսյանի սնանկության հաշվին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Նոր Արեշ» մասնաճյուղ՝ 1150021127007018 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք.Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽԸ

«Ամերիկայի առեւտրի դպլատը Հայաստանում» (ԱԱՊՀ) ՀԿ-ն Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ իրականացրեց Հայաստանի 2023-2030թթ. զբաղվածության ռազմավարության քննարկում:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի աջակցությամբ, ներգրավելով ԱԱՊՀ անդամ կազմակերպություններ «Ամերիա» եւ «ՍԻՎԻՏԱՍ ԷՅԷՄ» խորհրդատվական ընկերություններին, մշակել է «Հայաստանի 2023-2030 թթ. զբաղվածության ռազմավարություն»-ը:

Այն բաղկացած է զբաղվածության ոլորտի ուսումնասիրությունից, աշխատանքի շուկայի միտումների վերլուծությունից, աշխատուժի պրոֆիլավորումից, զբաղվածության ռազմավարությունների միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունից, տեսլականից ու նպատակներից եւ դրանցից բխող գործողությունների ծրագրերի սահմանումից: Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից ԱԱՊՀ հետ քննարկում կազմակերպելու նախաձեռնության նպատակը մասնավոր հատվածի տեսակետին, մարտահրավերներին ու առաջարկություններին ծանոթանալն էր:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանն ընդգծեց, որ զբաղվածության ռազմավարության մեջ կարեւոր փոփոխություններ են իրականացրել պետական քաղաքականության մոտեցման մեջ, որտեղ շեշտադրումը մարդկային կապիտալի զարգացումն է:

«Առաջին քայլը բարձր արտադրողականությամբ աշխատողների թվաքանակի աճին նպաստելու քաղաքականությունն է, մյուս կարեւոր ուղղությունն է ստեղծել հնարավորություններ, որպեսզի պետական համակարգի նպաստ ստացող մարդիկ ինտեգրվեն աշխատաշուկայում: Մյուսը պահանջարկի եւ առաջարկի անհամապատասխանության նվազեցումն է: Այս կետերին հասնելու համար մի շարք թիրախային խմբեր ենք սահմանել աշխատանքային ակտիվ միջավայրում ներգրավելու համար, որոնցից են մարզային քաղաքները ներառող համայնքների աշխատանքային տարիքի քաղաքացիները, 18-29 տարեկան չսովորող, չաշխատող երիտասարդները եւ միջին տարիքի՝ 30-40 տարեկան կանայք: Եթե կարողանանք այս բոլոր ուղղություններով աշխատաշուկան զարգացնել, ապա կարող ենք համարել, որ ոլորտային համապարփակ փաստաթուղթը, որը հիմա մշակվում է, իր նպատակին ծառայել է»,- նշեց նախարարը:

Նարեկ Մկրտչյանն ընդգծեց, որ մարդկային կապիտալի զարգացումը հնարավոր է իրականացնել միայն զուգահեռ տնտեսական, տարածքային եւ կրթական զարգացման ծրագրերը համադրելով:

«Ամերիա» ՓԲԸ-ի կառավարման խորհրդատվական ծառայության ղեկավար Տիգրան Զրբաշյանը, ներկայացնելով զբաղվածության ռազմավարությունը, նշեց, որ աշխատաշուկայում առկա առաջարկի եւ պահանջարկի անհամապատասխանությունների կրճատման նպատակով Հայաստանը պետք է խթանի զբաղվածությունը մրցունակ աշխատուժի ձեւավորման եւ բարձր արտադրողական աշխատանքային հնարավորությունների ընդլայնման միջոցով:

«Հայաստանի զբաղվածության ռազմավարությունը թիրախավորելու է մարզային քաղաքները ներառող համայնքները, որտեղ կենտրոնացած են զբաղվածության ամենախորքային խնդիրները, ինչպես նաեւ չսովորող, չաշխատող երիտասարդներին ու միջին տարիքի (30-40) չաշխատող կանանց երկարաժամկետ հեռանկարում խրախուսելու աշխատանքի արտադրողականության աճը: Նման հեռանկարային եւ կենսական նշանակություն ունեցող ծրագրերը պետք է ուղեկցվեն զբաղվածության պետական քաղաքականության հիմնարար վերափոխմամբ»,-ասաց Զրբաշյանը:

Քննարկման ընթացքում ելույթ ունեցան նաեւ ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի խորհրդական Վիկտորյա Այդինյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գեւորգյանը, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, որոնք նշեցին իրենց նկատառումները ռազմավարության վերաբերյալ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2023թ. հունիսի 27-ին՝ ժամը 13:00-ին, դարտաղան Գրիգոր Ավանեսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի «Արդշինբանկ» ՓԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով Գրիգոր Ավանեսյանին պատկանող գույքի աճուրդը՝ 1 ԼՈՏ 4 ենթալոտով, բաց դասական եղանակով:

Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ 1, ենթալոտ 1- ոսկյա կուլոն՝ 1 հատ, իրի զանգվածը 3.5 գրամ է, հարգը՝ 580:

Մեկնարկային գինը կազմում է 50,400 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1, ենթալոտ 2- ոսկյա շղթա՝ 4 հատ, իրերի զանգվածը 75 գրամ է, հարգը՝580:

Մեկնարկային գինը կազմում է 1,080,000 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1, ենթալոտ 3- ոսկյա ականջող՝ 6 հատ, իրերի զանգվածը 20 գրամ է, հարգը՝580:

Մեկնարկային գինը կազմում է 288,000 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1, ենթալոտ 4- ոսկյա թեւնոց՝ 6 հատ , իրի զանգվածը 73.5 գրամ է, հարգը՝580:

Մեկնարկային գինը կազմում է 1,022,400 ՀՀ դրամ:

ԼՈՏ 1 ընդհանուր մեկնարկային գինը կազմում է 2,440,800 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետակա գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.
- աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր:

Մասնակցության վճարը եւ նախավճարը կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1% եւ 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Գրիգոր Ավանեսյանի սնանկության հաշվին՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի «Նոր Արեշ» մասնաճյուղ՝ 1150020800890831 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան /ք. Երեւան. Օտյան 53/2:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԵՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ ԿԼԻՆԻ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ հունիսի 11-ին՝ ժամը 19:00-ին, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կկայանա համերգային երեկո՝ նվիրված ՀՀ ժողովրդական արտիստ, բալետմայստեր Ազատ Ղարիբյանի եւ ՀՀ ժողովրդական արտիստ, պարուսույց Թերեզա Գրիգորյանի ծննդյան 100-ամյակներին:

Պարային գեղեցիկ զույգին նվիրված համերգները նախաձեռնել են Ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոնը եւ «Զարկ» ժողովրդական երաժշտության եւ պարի աջակցման հիմնադրամը:

Հունիսի 18-ին՝ ժամը 19:00-ին, նույն համերգային ծրագիրը կկայանա Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում:

Համերգային ծրագրերի ընթացքում կներկայացվեն Ազատ Ղարիբյանի պարային բեմադրությունները:

Նշենք, որ բալետի արտիստ, պարուսույց Ազատ Ղարիբյանը 1962 թ. եղել է Հայաստանի պարի պետական անսամբլի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր բալետմայստերը, իսկ 1963-83 թթ.՝ Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլի գլխավոր բալետմայստերը: 1959 թ. նրա նախաձեռնությամբ Երեւանի պարարվեստի ուսումնա-բանում բացվել է ժողովրդական պարի բաժին, որը ղեկավարել է երկար տարիներ՝ ստեղծելով հայկական պարի ուսուցման ծրագիր: 1986 թ. ստեղծել է «Կռունկ» պարային համույթը, որի համար նա բեմադրել է լավագույն պարային համարներ՝ Ա. Բաբաջանյանի երաժշտությամբ «Էլեգիա», Կոմիտասի «Մոկաց հարսներ», Խ. Ավետիսյանի «Հուշեր», Մ. Փրիդոնյանի «Հայոց աղջիկներ», ժողովրդական երաժշտությամբ «Հարսանիք», մեկ գործողությամբ «Քաջ Նազար» բալետը, Սայաթ-Նովայի երաժշտությամբ զուգապար, ազգագրական պարերի շարաններ:

1956 թ. Ազատ Ղարիբյանն արժանացել է Հայաստանի վաստակավոր, 1980 թ.՝ ժողովրդական արտիստի կոչման:

Բալետի արտիստ, պարուսույց Թերեզա Գրիգորյանը 1955 թ. Երեւանի պարարվեստի ուսումնարանում հիմնել է դերասանի վարպետություն առարկան: 1956 թ. մասնակցել է Մոսկվայում կայացած հայ արվեստի տասնօրյակին, որտեղ կատարել է Գոհարի դերը Գ. Եղիազարյանի «Սեւան» բալետում, Շամիրամի դերը՝ Տ. Չուխաճյանի «Արշակ Բ» օպերայի ինտերմեդիայում, եւ արժանացել «Պատվո նշան» շքանշանի: 1972-74 թթ. նա եղել է Երեւանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի բալետային խմբի ղեկավարը: 1974-2004 թթ. ղեկավարել է Երեւանի պարարվեստի պետական ուսումնարանը, 1980 թ.՝ Երեւանի թատերական ինստիտուտի բեմական շարժման ամբիոնը (1995 թ.-ից՝ դոցենտ): 1981 թ. արժանացել է երկրորդ «Պատվո նշան» շքանշանին: 1986 թ. Ազատ Ղարիբյանի հետ հիմնել է «Կռունկ» պարային անսամբլը, իսկ ամուսնու մահից հետո շարունակել է ղեկավարել անսամբլը: 1963 թ. Թերեզա Գրիգորյանն արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի, 1968 թ.՝ ժողովրդական արտիստի կոչման:

ՖՈՒՏԲՈԼ

ԲԵԳԼԱՐՅԱՆԸ՝ ՆՈՐ ԱԿՈՒՄԲՈՒՄ



Հայաստանի ազգային հավաքականի 30-ամյա դարպասապահ Արսեն Բեգլարյանը չեմպիոն «Ուրարտուից» տեղափոխվեց «Արարատ-Արմենիա». հաղորդում է ակումբի մամուլի ծառայությունը:

«Բեգլարյանը վերջին 4 մրցաշրջանների ընթացքում պաշտպանել է Երեւանի «Ուրարտուի» դարպասը, կարիերայի ընթացքում հանդես է եկել լատվիական «Լիեպայայում», բելառուսական «Դնիպրո Մոգիլեւում», ռուսական «Կրասնոդարի» տարբեր թիմերում, նաեւ հայկական մի շարք ակումբներում:

Բարի գալուստ մեր ֆուտբոլային ընտանիք, Արսեն»,- նշվում է «Արարատ-Արմենիայի» հաղորդագրությունում:

«Արարատ-Արմենիան» Հայաստանի Պրեմիեր լիգայում գրավել է երրորդ տեղը եւ կմասնակցի Կոնֆերենցիանների լիգայի որակավորման փուլին:

ԱՌԱՋԻՆ ԳՈԼԻ ՍՊԱՍՈՒՄՈՎ

Հայաստանի հավաքականի եւ Մոսկվայի «Լոկոմոտիվի» պաշտպան Նաիր Տիկնիզյանի առաջին մարզիչ Ալեքսանդր Չելպանովը հույս է հայտնել, որ 24-ամյա ֆուտբոլիստն առաջիկա պաշտոնական հանդիպումներում կխփի առաջին գոլը ազգային թիմում:

«Տիկնիզյանն անցկացրեց իր լավագույն մրցաշրջանը: Նա շատ ուրախ է, որ հրավեր է ստացել Հայաստանի հավաքականից: Մեր զրույցներում նա միշտ նշում է, որ անհամբեր սպասում է հավաքականի խաղերին: Նա ցանկանում է աշխատել, զարգանալ եւ օգնել Հայաստանի հավաքականին հասնել դրական արդյունքների: Սպասում ենք նրա առաջին գոլին Հայաստանի հավաքականում»,- ասում է Ալեքսանդր Չելպանովը:

Ավարտված ակումբային մրցաշրջանում Տիկնիզյանը մասնակցել է 37 հանդիպման, խփել է 5 գոլ, կատարել 5 գոլային փոխանցում:

«Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարում Հայաստանի թիմը հունիսի 16-ին կհյուրընկալվի Ուելսի հավաքականին, հունիսի 19-ին Երեւանում կընդունի Լատվիայի հավաքականին:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹԵԺ Է

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ օրեր առաջ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում թեժ է եղել:

Թեման ԿԳՄՍ փոխնախարար Կարեն Գիլոյանի օգնական Ամալյա Խաչատրյանին Հայաստանի բասկետբոլի ազգային հավաքականի կազմում ներգրավելն է: Ու դա էլ քիչ է, Գիլոյանն իր օգնականին ներառել է վիզա ստացողների ցանկում: Սա առաջացրել է ողջ նախարարության աշխատակազմի զայրույթը, ու երեկ ողջ օրը թեժ քննարկվել է այս հարցը, թե ինչու պետք է Գիլոյանի օգնականը պետական բյուջեի հաշվին ԱՄՆ մեկնի, երբ այդ ոլորտի հետ որեւէ կապ չունի:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկությունը ճշտելու համար կապ հաստատեց Ամալյա Խաչատրյանի հետ, որը մեզ հետ զրույցում ասաց. «Ես սպորտի նախարարությունում եմ աշխատում եւ տարբեր կազմակերպչական հարցերով այնտեղ օգնելու եմ: Ես որպես բասկետբոլիստ չեմ ընդգրկվել հավաքականի կազմի մեջ, ես տարբեր կազմակերպչական, փաստաթղթային հարցերով օգնում եմ իրենց, իմ հաշվին գնում եմ, իմ հաշվին գալիս եմ: Ես ԱՄՆ եմ գնում իմ հաշվին, պետությունից 10 դրամ չեմ ստանում, ես արձակուրդ եմ վերցնում, գործուղման չեմ գնում, որեւէ խնդրահարույց բան չկա»,- վստահաբար հայտարարեց մեր զրուցակիցը:

Բայց փաստ է մի բան, որ նախարարությունում այս հարցը մեծ բունտ է առաջացրել:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

● Հունիսի 11-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Փափլիկը» ներկայացումը: Տոմերի արժեքը՝2500-3500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ովքե՞ր կարող են մասնակցել ներքին աուդիտորի որակավորման քննություններին Ֆիննախում:

Վարսիկ Փաշայան (28 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ կառավարության՝ 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշման պահանջների համաձայն՝ ներքին աուդիտորների որակավորման նպատակով անցկացվող քննություններին (այսուհետ՝ քննություն) կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող այն քաղաքացիները,

1) ովքեր դատական կարգով չեն ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) ովքեր չունեն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատ-վա-ծություն,

3) ովքեր դատական կարգով չեն զրկվել ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում պաշտոն զբաղեցնելու կամ գործունեությամբ զբաղվելու իրավունքից,

4) ում քննությանը մասնակցելու համար լիազոր մարմին նախորդ 3 տարվա ընթացքում ներկայացված դիմումը չի մերժվել լիազոր մարմնի կողմից՝ պահանջվող փաստաթղթերում կեղծ եւ (կամ) անարժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու հիմքերով:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ է առձեռն, փոստով (էլ. փոստ՝ secretariat@minfin.am) կամ էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային համակարգի միջոցով փաստաթղթերը ներ-կայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով) լիազոր մարմին ներկայացնել՝

- դիմում,
- անձնագրի եւ սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենը,
- բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը:

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԱՐՑ. Հիմա կորոնավիրուսի դեմ պատվաստվելու ինչ-որ հակացուցումներ կա՞ն:

Արգիշտ Եսայան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պատվաստումների բժշկական հակացուցումները լինում են բացարձակ եւ ժամանակավոր: Պատվաստումների միակ բացարձակ հակացուցումը տվյալ պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո առաջացած անաֆիլաքսիան է կամ ծանր ալերգաբանական ռեակցիան (տարածուն եղնջացան, սուլող շնչառություն, բերանի խոռոչի, կոկորդի այտուց, դժվարացած շնչառություն, հիպոթենզիա եւ շոկ) պատվաստանյութի կամ պատվաստանյութի որեւէ բաղադրիչի նկատմամբ:

ՀՀ առողջապահության ու աշխատանքի տեսչական մարմին

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պատվաստման ժամանակավոր հակացուցումներն են սուր հիվանդությունները՝ միջին եւ ծանր ընթացքով, ինչպես նաեւ քրոնիկ հիվանդությունների սրացումը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Պատանի հայ բռնցքամարտիկները 3 մեդալ են նվաճել Ղազախստանում կայացած միջազգային մրցաշարում, որին մասնակցում էր 7 երկրի ավելի քան 200 բռնցքամարտիկ:

46 կգ քաշային Վահրամ Դովլաթբեկյանը դարձել է արծաթե մեդալակիր, իսկ 63կգ քաշային Արտյոմ Ստեփանյանն ու գերծանր քաշային Տիգրան Խաչատրյանը նվաճել են բրոնզե մեդալ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 8 +21 + 26
Կոտայքի լեռներ	+ 4 + 9 +21 + 25
Կոտայքի նախալեռներ	+13 + 15 +27 + 29
Գեղարքունիք	+ 4 + 9 +20 + 25
Լոռի	+11 + 16 +20 + 26
Տավուշ	+12 + 15 +23 + 27
Արագածոտնի լեռներ	+ 3 + 7 +20 + 23
Արագածոտնի նախալեռներ	+13 + 16 +26 + 30

Արարատ	+14 + 17 +31 + 33
Արմավիր	+12 + 15 +30 + 32
Վայոց ձորի լեռներ	+ 4 + 8 +20 + 23
Վայոց ձորի նախալեռներ	+14 + 17 +27 + 31
Սյունիքի հովիտներ	+13 + 17 +23 + 27
Սյունիքի նախալեռներ	+ 9 + 12 +21 + 24
Արցախ	+14 + 17 +28 + 32
Երեւան	+ 13 + 15 +29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*